ընդունեցի. բայց որդին չէր, նա ծերունուն «քաւոր» կոչեց: Իսկ այդ անունները՝ քաւոր Պետրոս եւ Մուրադ՝ երկուսն էլ ծանօթ էին ինձ... Երիտասարդը խօսեց.

— Ես եւ դու մեր բոլոր լաւ ընդունակութիւնները, մեր բոլոր մտաւոր եւ հոգեկան ընդարձակ ուժերը գործ դրինք, այո՛ դէպի չարը, դէպի անազնիւը... Բայց ովքե՞ր էինք «մենք: Մենք մի հասարակութիւն էինք: Մեր մէջ կերպարանագործուած էր մի ամբողջ ժողովուրդ իր անբարոյական ախտերով: Մենք նրա տիպարն էինք: Մենք գործում էինք միայն մեր նեղ, անձնական շահերի համար: Իսկ այդ շահերը բխում էին ոչ մաքուր աղբիւրներից: Մենք մոռացել էինք, որ բացի մեր շահերից, կան աւելի սուրբ. աւելի անբռնաբարելի շահեր հասարակութեան շահերը: Մենք կատարում էինք մեր պարտականութիւնը դէպի մեր անձը միայն, այն եւս ոչ օրինաւոր ճանապարհով: Մենք մոռացել էինք, որ աւելի մեծ պարտականութիւններ ունենք դէպի մեր ազգը, դէպի մեր հայրենիքը եւ, վերջապէս, դէպի մարդկութիւնը: Փոխանակ ազգի, հայրենիքի, մարդկութեան լաւ անդամ լինելու, մենք դարձել էինք նրանց ուտիչ, ապականիչ ցեցը: Մեր գործերի համեմատ մենք ժառանգեցինք «խաչագողէ անունը: Դա մի ամօթալի՛ անուն է: Գո՛ղ, եւ սրբութեան գող: Այո՛, մենք գողանում էինք ինչ որ մարդկանց համար սուրբ էր, ինչ որ նրանց համար թանկագին էր: Մենք գողանում էինք նրանց կեանքը, նրանց կայքը, նրանց պատիւը: Ոչինչ չէր գոհացնում մեր ագահութիւնը: Ոչնչով չէր խայթում մեր խիղճը: Ամէն չարիք յաջողւում էր մեզ, եւ այդ աւելի խրախուսում էր մեր անբարոյական ձգտումները: Իսկ այժմ հասաւ ժամանակը՝ մերկանալ հին մարդը եւ, իբրեւ նոր մարդ, նոր հոգով եւ նոր եռանդով գործել՝ դէպի ազնիւը եւ դէպի լաւը: Մեր բոլոր ընդունակութիւնները, որ զարգացած էին միայն չարիք գործելու համար, թող այսուհետեւ գործ դրոին դէպի հասարակաց բարին...

Ծերունին գրկեց նրա գլուխը, ճակատը համբուրեց:

Այդ բոլորը խօսում էր ջորեպանի ծառան, որին ես անկիրթ անզարգացած մարդու տեղ էի դնում: Այդ ի՞նչ խաղ էր, այդ ի՞նչ հանելուկ էր: Նա վեր կացաւ, Ասլանը ինձ եւս աչքով արաւ, որ հեռանամ: Մենք դուրս եկանք տաղաւարից, Ասլանը եւ ծերունին մնացին այնտեղ: Թէ ի՞նչ խօսեցին եւ ի՞նչ խորհեցի, ես չգիտեմ, միայն նրանց խօսակցութիւնը երկար, շատ երկար տեւեց: Մենք բաւական հեռու էինք նստած, ձիաների մօտ եւ ոչինչ չէինք լսում: Յետոյ նրանք ցած թողեցին տաղաւարի մուտքի վարագոյրը, ես կարծեցի, որ քնեցին: Բայց լապտերը մինչեւ լոյս վառւում էր: